ՄՇԱԿ

ԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՄՇԱԿԻ»

Տարեկան 10 բուրլի, վեց ամսով 6 բուրլի, երեք ամսով՝ 3 բ. 50 կ.
Առանձին համարը 1 բ., հասոյթ 5 կ.

Խմբագրատեղին Թիֆլիս. Redaction „Nor-Dar".

Խմբագիր-հրատարակիչ Ե. Տ-ԱՆ.

Տպագրված Թիֆլիս. Տպարան Ռեձակցիա „Нов-Дерь"
տակ Տ-ԱՆ.

ՆՈՐ-ԴԱՐ

№ 122 ՏԱՍՆՕՐԵՔԻ ՏԱՐԻ Երեքշաբթի 23 Մայիս 1897 Երեքշաբթի 23 Մայիս ՏԱՍՆՕՐԵՔԻ ՏԱՐԻ № 122

ՖԱՆՏԱՍՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

— Լուրեր։
— Ֆ ե լ ի ե տ ո ն ի ա ն։— Հա-
յ. Ե. Ընկերակիցներ։
— Ֆ ե լ ի ե տ ո ն ի ա ն։— Հա-
յ. Ե. Ընկերակիցներ։

Ֆելիետոնիան պատմվածք։

ՕՏԱՐԱՀՅԱՑ

(Ընտանեկան նկարագիր)

Ընթերցողին պետք է ներել իմ ձեռագրի վատ գրությունը, որովհետև ես ստիպված եմ եղել գիշերով գրել, որ ոչ ոք չիմանա իմ գրածի մասին։ Ես ստիպված եմ եղել գրել, որ ոչ ոք չիմանա իմ գրածի մասին։

Ես ստիպված եմ եղել

յոց սուրբ Աստուածածնայ եկեղեցին մեծ տարածութիւն ունի եւ յաւտնուելու առա-
ջին տեսութեան հետ ամենքի վրայ մեծ ազդեցութիւն կ՚ընէ։ Ներսի կողմերն ալ
150—200 սաժէն հեռաւորութեան վրայ պատուհանաձեւ եկեղեցւոյ պատերուն մէջ
մեծ անցքեր կան, որոնց միջոցով եկեղեցւոյ ներսի կողմերը լուսաւորուելու
համար (լաւ լոյսէ) ի հակառակի սովորական եկեղեցեաց, որոնց լոյսը վերէն
կ՚իջնէ, այս եկեղեցւոյ լոյսը կ՚իջնէ կողմերէն։ Ասոնց ալ ետեւը կան ուրիշ
պատուհանաձեւ անցքեր, որոնց միջոցով կանանց համար յատկացուած տեղերը
կը լուսաւորուին։ Ասոնք ալ ներսի կողմերէն ծածկուած են ցանցերով, որպէսզի
կանանց երեսները չերեւնան։ Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են, եւ
ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են, եւ ներկերը ալ
ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են, եւ ներկերը ալ ոսկեգոյն։
Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են, եւ ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կող-
մերը ամենքն ալ ներկուած են, եւ ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամեն-
քն ալ ներկուած են, եւ ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամենքն ալ ներ-
կուած են, եւ ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են,
եւ ներկերը ալ ոսկեգոյն։ Ներսի կողմերը ամենքն ալ ներկուած են, եւ ներկերը
ալ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԱԶԳԱՅԻՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

2թ.

Ա. ՊՈԼԻՆ.—Ներկայ տարուան մէջ մինչեւ 1 յուլիս ընդհանուր առեւտրական շրջանառութիւնը 69,038 ֆունտ ստեռլինգ է, որ 3534 ստեռլինգով աւելի է անցեալ տարուան նոյն ժամանակամիջոցէն։

ՀԱՄԲՈՒՐԳ, 17 յուլիսի.—Տուրքերու ժողովը կը շարունակէ իր նիստերը։ Ներկայ է 52 պատգամաւոր։ Նիստը կը վարէ Ա. Պոլոք։

Ա. Պոլոք կ՚ըսէ, թէ ինքը ստացած է հետեւեալ հեռագիրը Պրեսլաուէն։ «Ես կը հաստատեմ, որ Պրեսլաուի առեւտրական պալատը ոչ մէկ անգամ ինծի դիմում ըրած է ներկայ տարուան մէջ։ Ես կը հաստատեմ նաեւ

կարելի է ապահել, որ վաղը վերջնականապէս վերջնայ յունական ֆինանսների վրայ նշանակելիք կոնտրոլին վերաբերեալ 2-րդ յօդուածի և Թեսսալիայից թուրքաց զօրքերի հեռացման վերաբերեալ 6-րդ յօդուածների խմբագրելը։

Եթէ չյարուցուին չնախատեսած արգելքներ, վաղը կըվերջնան հաշտութեան նախնական պայմանները, որոնք կազմուած կըլինեն 11 յօդուածներից և կըմնայ միմիայն ստորագրել այդ պայմանները և ներկայացնել սուլթանին ի հաստատութիւն.

ԼՈՆԴՈՆ.—Պատգամաւորների ժողովն Մալականդի վրայ յարձակում գործելու առթիւ Համիլտոնը հաղորդում է, որ մահմեդական ֆանատիկոս կրօնաւորների քարոզները դրդռեցին տեղացիներին յարձակումն գործելու։ Անգլիացիք, յուլիսի 27 ին, ամբողջ օրը կռւում էին։ Յարձակում գործողները ամեն տեղ է ջարդուած են։ Հետապնդութիւններ են ուղարկուում, որովհետև նորանոր յարձակումների են սպասում։ Անգլիացիները կորցրել են 11 սիպայ և 1 պորուչիկ. վիրաւորուած են 142 հոգի։

ՍՏՈԿՀՈԼՄ. — Նորդենչիլդը անմիտ բան է համարում այն ենթադրութիւնը, թէ Աննէրի օդապարիկը կարող էր թռչել դէպի Սպիտակ Ծովը։ Նա միևնոյն փաստերն է առաջ բերում ինչ որ և Նանսենը։ Դոքտոր Էքհոլմը նոյնպէս երկբայում է յիշած ենթադրութեան մասին և ուշադրութիւն է դարձնում այն զարմանալի բանի վրայ, որ Դորտրեխտը ուշադրութեամբ չէ դիտել նկատած առարկան։ Բայց և այնպէս Էքհոլմը առաջարկում է Վարդայից մի արշաւախումբ ուղարկել Սպիտակ Ծովը խուզարկելու համար։

ՍԻԼՄԱ.—Մալականդում, անգլիական օբսերվատորի վրայ երէկ յարձակում տեղի ունեցաւ, որը տեւեց մի քանի ժամ։ Մեծ վնասներ կրելով թշնամին յետ է մղուած։ Անգլիացիներից սպանուած է է 1 և վիրաւորուած են 15 հոգի։ Անգլիական բանակատեղից դէպի արեւելք գտնուած բլրի վրայ ժողովուած են ահագին թուով տեսակցիներ։ Ենթադրում են, որ բենեալների ցեղը ոտքի է կանգնել։

ՊՐԱԳԱ.—Ամբողջ Բոհեմնայում գետերի ջուրը բարձրացել է և շատ տեղերում դուրս է եկել ափերից՝ ահագին վնասներ հասցնելով արտերին և ճանապարհներին։ Եղել են մի քանի մարդկային զոհեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի.—Յուլիսի 19 ին «Գալերնայա գվիազդա» նաւով ճանապարհուեցին դէպի Դանիա թագուհի կայսրուհի Մարիա Ֆեօդորովնան, Լիւքսէնբուրգի պրինց Յօհաննը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչը և մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնան։

ՅԱՐՈՍԼԱՒԼ.—Այրւում է Լիւբիմ քաղաքը։ Այրուել են եկեղեցին, հիւանդանոցը, քաղաքային և զեմստվային վարչութիւնները, Գոստային զրաւենեակը, գաւառական ժողովատեղին և դեղատունը։ Կարիքը ահագին է։

ՄԱԼԹԱ.—Անգլիական հետեակ զընդից 400 հոգի ուղարկուած են Գրեաէ կղզին։

ԲՐԻՍԵԼ.—Յայտարարուած է, որ Անգլիայի հետ ունեցած առևտրական դաշնադրութիւնը վերջացած է։

ԲԵՐԼԻՆ.—Սիլեզիայում և Սաքսոնիայում ամենուրեք հեղեղներ են պատահել։ Շատ երկաթգծերի վրայ հաղորդակցութիւնը դադարեցրած է, շատ կամուրջներ և տներ կործանուել են և շատ մարդիկ են փշացել։ Նիւթական վնասները ահագին են։

ԼՈՆԴՈՆ.—Կ. Գոլսից, յուլիսի 19-ից հեռագրում են «Times»-ին. «Դեսպանները իրենց ակրութիւններից հրաժանգ տացան համաձայնուելու Գերմանիայի առաջարկութեանը յունական ֆինանսների վրայ օտարերկրեայ կոնտրոլ նշանակելու վերաբերութեամբ։ Այս բանի հիման վրայ հաշտութեան պայմանների յետագայ ժողովը տեղի կունենայ շաբաթ օրը»։

Նոյն լրագրին հեռագրում են Սֆէնքից.—«Ճէրութիւնը մեծամեծ ջանքեր է գործ դնում, որպէսզի կարողանայ միջոցներ ձեռք բերել պատերազմական տուգանքի առաջին մասը վճարելու համար»։

ԴՈՐՍՏՈՏ.—7 չուէդական գիտնականներ վարձու վերցրած նաւով ճանապարհեցին այստեղից դէպի Արխանգելսկ։

ՍՏՈԿՀՈԼՄ. — Ենիսէյի ճանապարհի վրայ գտնուած 11 չոգենաւերին խընդրել են ուշադրութեամբ դիտել այն ջրերը, որոնց մէջ կապիտան Դորտրեխտը նկատել էր օդապարիկանման առարկան։ Այդ չոգենաւերը օրերումս անցնելու են Վարդէոյի։

Կ. ՊՈԼԻՍ.—Այն լուրը, որ իբր թէ յոյն-թըրքական պատերազմի պատճառով մասնաւոր չէնքերին պատահած վնասները գոհացնելու համար առանձին գումար է յատկացրուած, անհիմն է։ Հաշտութեան նախնական պայմանների համաձայն, այդ գումարի քանակութիւնը պէտք է յանձնաժողովի օգնութեամբ որոշեն հենց իրենք երկու պետութիւնները իրար միջև համաձայնութիւն կայացնելով։ Անհամաձայնութեան դէպքում երկու պետութիւններից նշանակուած միջնորդ դատաւորներին կըյանձնուի գործը, որ նրանք վճիռ կայացնեն։

ԼՈՆԴՈՆ.—Մալականդից ստացուած պաշտօնական տեղեկութեանց համաձայն, խռովարարները յարձակուել են Մալականդից հիւսիս գտնուող 2ակղաթա գիրքի վրայ։ Կռիւը տեւել է երեկոյեան ժամը 2-ից մինչև միւս օրուան 8 ժամը։ Անգլիացիներից վիրաւորուած են 5 հոգի։ Թշնամիները ահագին վնասներ են կրել։

ՎԵՆՆԱ.—«Fremdenblatt»-ը մի յատադրձ հայացք է ձգում մօտերումս տեղի ունեցած հաշտութեան բանակցութիւնների վրայ, ի նկատի է կացուցանում յունական ֆինանսների վրայ կոնտրոլ սահմանելու վերաբերմամբ Գերմանիայի ունեցած յարաբերութիւնները յայտարարում է, որ այդ յարաբերութիւնը ըստ ամենայնի կանոնաւոր էր։ Աւստրիական դեսպանը այդ պատճառով հենց իսկոյն համաձայնուեց իւր գերմանական ընկերոջ հետ։ Դրանից յետոյ, երբ որ Ռուսիան էլ տուեց այդ առթիւ իւր համաձայնութիւնը, միւս պետութիւնները այլ ևս հիմք չունէին ընդդիմանալու։ Ճունաց կողմից, որպէս ասում են, արդէն որոշ պատասխան է ստացուած. այդ կէտումն էլ յունաց կառավարութիւնը հնազանդուելու է պետութեանց կամքին։ Երկու կողմերի էլ շահերը պահանջում են, որ միջնորդ պետութեանց առաջարկութիւնը ընդունելութիւն գտնի։ Ծիշտ լրագիրը յետոյ անցնում է Ստոյիլովի Բեռլինի մի լրագրի աշխատակցի հետ ունեցած խօսակցութեանը։ Ստոյիլովը որպէս թէ ասել է, որ Բուլղարիայի և Աւստրիա Ունգարիայի միջև յարաբերութիւնները լարուած են և թէ դրա պատճառը Աւստրիա Ունգարիան է։ «Fremdenblatt»-ը հաւատ չէ ընձայում այն բանին, որ մի պատասխանատու մինիստր այն բաներն ասէը, որ վերագրում են Ստոյիլովին։ Լրագիրը սպասում է հերքման։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի.—Յուլիսի 20-ին հանդիսաւոր կերպով բացուեց առաջին համառուսական հրէշջային ցուցահանդէսը։ Հանդիսակատարութեանը ներկայ էին Մեծ Աշխան Վլադիմեր Ալէքսանդրովիչը իւր օգնական ամուսնու և Մեծ Իշխան Անդրէյ Վլադիմիրովիչի հետ, ներկայ էին նմանապէս ներքին գործերի և ֆինանսների մինիստրները, ծովային մինիստրութեան կառավարիչը, Պետերբուրգի քաղաքապետը և չատրարձրաստիճան անձնաւորութիւններ։ Ցուցահանդէսը կազմուած է հմաութեամբ և հաւանական է, որ աջողութիւն ունենայ։

ՄՈԼՈՒՄ.—Այրուել է 35 տուն։

ՅԱՐՈՍԼԱՒԼ.—Վոլգան հեղհեղաւ չափ ուսկում է ծանծաղանալ։ Ջոգենաւերը դադարեցրել են իրենց գնացքները։

ՎԼԱԼԻՆՍԻԿ.—Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահը Դարլան Բուշէ և Ռամբօ մինիստրների ուղեկցութեամբ ժամանեց տեղս և սրտագին ընդունութիւն գտաւ ժողովրդից։ Ընդունելութեան ժամանակ Դրսմի դեպարտամենտի ընդհանուր ժողովի նախագահ Լուբէն յայտնեց, որ ամբողջ Ֆրանսիայի հոգին հասարակապետութեան նախագահի հետ է լինելու նրա Ռուսիայում եղած միջոցին։ Փորը չնորհակալութիւն յայտնեց հայրենասիրական այդ զգացմունքների համար։ Այդ զգացմունքները դիւրութիւն են տալու նրան կատարել Ռուսիայում իւր նպատակը։

ՎԵՆՆԱ.—Դանուբի ամբողջ չրջակայքում հեղեղը դեռ ևս չարունակում է։

Կ. ՊՈԼԻՍ.—2 րդ և 6-րդ յօդուածների մի քանի պաշտօնական մանրամասնութեանց առթիւ Դրան հետ բանակցութիւններ են չարունակուելու մի ժողովի մէջ, որը կայանալու է երեքշաբթի։ Այդ ժողովով յուսվեն վերջ գնել հաշտութեան նախնական պայմանների բանակցութեանց։

Կ. ՊՈԼԻՍ.—Հաշտութեան պայմանների երէկուան ժողովում դեսպանները վերջացրել են հաշտութեան պայմանների միւս մասի ևս թվիկ փաշան ներկայացրել է զանազան յաւելուած առաջարկութիւններ, որոնց դեսպանները պատասխանել են գրաւոր կերպով։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, տ. Աննա Բաֆֆիին.—Ստացանք Ձեր հանգուցեալ ամուսնու անտիպ վաստակներից հանուած «Թատրոն» կտորը։ Առաջիկայում կըհրատարակենք։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Մօտ օրերս Սարիղամիշ այցելեց Թիֆլիսի առաջնակարգ վաճառականներից մէկը, պ. Ազէք. Միլովը, որ նուիրեց մեր խմբագրատան մի զոյգ վեց պուդանոց դանգեր. իսկ նրա ընկեր Նիկողայոս Վարդան Սրապեանցը նուիրեց եկեղեցու աւագ սեղանին մի պատկեր իւր չրջանակով և իւր վրայ վերցրեց զանգակատան շինութիւնը և գլխի խաչը։ Խորհին շնորհակալութիւն են յայտնում ինձ հետ միասին Սարիղամիշի հայ ժողովուրդը նուիրատու յարգելի պարոններին։

Մկրտիչ քահ. Ափրիկեանց։

Սարիղամիշ, 13 յուլիսի։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երեք եկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի, եւ ուրբաթ օրերը, ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւնը ամենայն օր, ժամը 9—10 առաւօտեան վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ ծննդաբեր կանայք ընդունուում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը սրոշուում ըստ դասակարգերի։ Չունեորները ձրի են։ Դիւնեկոլոգիայի բաժանմունքը մանող ները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր. Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երեք եկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունեորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ

100—55 Մ. ՄԿՐՏՉԵԱՆ։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարզպատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս օրուայ 4 ժամ և 1 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպ։ Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաքու առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաքու է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպ։

Մարզպատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաքու երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաքու է հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ։

Մարզպատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաքուից դէպի Թիֆլիս առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ. Թիֆլիսից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարզպատար № 4 գնացքը Բաքուից դուրս է գալիս դէպի Թիֆլիս երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ։ Թիֆլիսից դուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին։

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Աւետարանական Կուրսերի նպատակն է, մասնագիտական աւետարանական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Ուսարտողներն առանում են առետատուներ։

Առանձին առարկաները սրանք են.—1) Աւետարանական Վնտեսութիւն 2) Աւետարանական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համբիչի վրայ, 5) Աւետարանական Իղղակցութիւն 6) աւետարանական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, (վատ ձեռքի—почеркъ ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոլակում, Ալէքսանդր Փրիգոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նապոլեոնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ՉՐԻՊԷՍ ևղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(789) 25—8

ՃԱՇԱՐԱՆ „ՊՈՒՐ-Ղ ՎԻՆՕ“

ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ

ՏՈՒՆ ԻԵ. Կ. Ի. ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒ

ՃԱՇԸ. 1) 4 տեսակ և մի բաժակ օղի, ½ շիշ գինի, կամ 1 շիշ գարեջուր և մի գաւաթ սուրճ—մէկ րուբլի։ 2) 3 տեսակ և մի բաժակ օղի, ½ շիշ գինի, կամ մէկ շիշ գարեջուր և մի գաւաթ սուրճ—80 կոպ.։ 3) երկու տեսակ և մի բաժակ օղի, ½ շիշ գինի, կամ 1 շիշ գարեջուր և մէկ գաւաթ սուրճ—60 կոպ, և 4) երկու տեսակ և մի բաժակ օղի և մի գաւաթ գարեջուր կամ մի բաժակ գինի—40 կոպ.։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԻՈՀԱՆՆՈՑ։ Կերակուրները որպէս Եւրոպական նմանապէս և Ասիական ու Տեղական։ Գները մատչելի են։

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԻՄԻՉՔՆԵՐ։ ՕՂԻՆԵՐ. Սմիրնովի և Գոլովկի, Ջրիտերի և Սարաջևի—բաժակը 5 կոպ.։ Կոնեակ, Ջուբրովկա, քինաքիժի օղի, անգլիական գառն և և այլն—բաժակը 10 կոպ.։ Գինու մի գաւաթը 5 կոպ.։ Մի շիշ «ԿԱԽԵԹԻԱ» 40 կոպ-ից սկսած, ½ շիշը 20 կոպ-ից։ Իշխան Բագրատիոն-Մուխրանսկու գինիները 40 կոպ-ից սկսած և աւելի թանկ. Իշխան Ջորջաձէյինը 35 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխ. Ճաւճաւաձէյինը 30 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իսկ ½ շիշը 15 կոպ.։

ԳԱՐԵՋՈՒՐ ՎԵՏՃԵԼԻ։ Գաւաթը 5 կոպ, շիշը 15 կոպ.։ Բաւարական կաս՝ շիշը 15 կոպ.։ Լիմոնադ, սիփոն և մրգի ջրերը ½ շիշը 10 կոպ.։ Թէյը և կաթը 5 կոպէկ. սուրճը 10 կոպ։

Միևնոյն տեղում առանձին դահլիճում կան 5 հատ Ֆրէյբերգի բիլիարդներ, ժամը 30 կ։ Նարդին և չախմատը ցերեկով 15 կ. իսկ գիշերը 20 կ.։ Ճաշարանն ունի և կահաւորուած սենեակներ 40 կոպէկից մինչև 1 ր. 50 կ. իւրաքանչիւր օր ու գիշերուան համար. ամիսը 10 ր. մինչև 30 ր.

Յարգանօք՝ ԵՓՈՐ ՄԱՄԻԱՆԱՑՇՎԻԼԻ.

(795) 20—4.

Дов. цензурою, Тифлисъ, Іюля 22-го дня, 1897 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера